ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎՈՒՄ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 1918 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԼՈՐԵՏԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

1918 թ. սկզբներին թուրքական բանակը, խախտելով Երզնկայի 1917 թ. դեկտեմբերի 5-ին Անդրկովկասի կառավարության՝ Կոմիսարիատի հետ կնքված զինադադարի համաձայնագիրը, ներխուժեց երկրամաս: 1918 թ. փետրվարին ընկավ Երզնկան, այնուհետև՝ Էրզրումը, ապրիլին՝ Կարսը, և մայիսի սկզբներին թուրքական զորամասերը հայտնվեցին Ալեքսանդրապոլում, այնուհետև՝ Արարատյան դաշտում՝ Երևանից 20–30 կմ հեռավորության վրա: Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի արյունահեղ մարտերից հետո Թուրքիան անդրկովկասյան երեք հանրապետությունների հետ սեպարատ պայմանագրեր կնքելով, բանակի ողջ ուժերը կենտրոնացրեց Բաքվի ուղղությամբ՝ նպատակ ունենալով լուծել հետևյալ խնդիրները. տիրանալ Բաքվի նավթառատ շրջանին, անմիջական ճանապարհ բացել դեպի թուրանական աշխարհ, Բաքուն դարձնել նորահայտ ադրբեջանական հանրապետության մայրաքաղաք ու հաստատել այնտեղ այդ հանրապետության դրածո կառավարությունը, դուրս մղել Անդրկովկասից Ռուսաստանին և վերացնել այդ նպատակների իրագործմանը խոչընդոտող հայությանը: Նկատենք, որ Թուրքիայի նպատակները համահունչ էին Կայսերական Գերմանիայի շահերին: Թուրքական բանակի արշավանքին մասնակցում էին զգալի թվով գերմանական զինվորականներ:

Ճանապարհին թալանելով, ավերելով, սրի ու հրի մատնելով Նուխու, Արեշի, Շամախու ու Գյոկչայի հայկական ծաղկուն բնակավայրերը, ոչնչացնելով բնիկ հայ բնակչությունը, Բաքվի պաշտպանների մոտ 3,5 ամսվա համառ ու հերոսական դիմադրությունը կոտրելուց հետո, թուրքական բանակը տեղական ավազակաբարո թաթար, քուրդ հրոսակախմբերի հետ 1918 թ. սեպտեմբերի 15 -ին մտավ Բաքու:

Բաքվում տեղի ունեցած հայկական հրեշավոր կոտորածների մասին պահպանվել են հարյուրավոր վավերագրեր, որոնց մի մասը վերջերս լույս է ընծայվել[1]: Դեռևս 1918 թ. աշնանը Բաքվի Հայոց ազգային խորհրդի քարտուղար Բախշի Իշխանյանը ոճրագործության թարմ հետքերով կատարած ուսումնասիրությամբ պարզել էր, որ երեք օրվա ընթացքում զոհվել է տարբեր սեռի, տարիքի, սոցիալական վիճակի 29080 հայ, այսինքն՝ Բաքվի հայ բնակչության մոտ 32% -ը[2]:

---

[1] *Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.: Կազմողներ՝ պ. գ. թ. Ս. Միրզոյան, բ. գ. թ. Ա. Ղազիյան, Երևան, 2003:*

[2] *Բ. Ի շ խ ա ն յ ա ն. Բաքվի Մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերյան անցքերի. 1918, Թիֆլիս, 1920, էջ 184,185,187:*

«Նորաթուխ Ադրբեջանի հանրապետության կառավարությունը բռնությունները դարձրեց նպատակային, բարձրացրեց պետական մակարդակի. պատերազմ հայտարարվեց հայությանը»[3],– 1923 թ. գրել է ռուս հասարակական գործիչ, երկար տարիներ Բաքվում ապրած, դեպքերին քաջածանոթ Բ. Բայկովը:

Հայաստանի անկախ պետականության ճակատագրում Բաքվի պաշտպանության նշանակությանը ճշմարիտ գնահատական է տվել Ս.Վրացյանը. «Բաքվի հերոսամարտը, հայ ժողովրդի դիմադրական ոգու ամենափայլուն արտահայտություններից մեկը, որ այնքա՛ն թանկագին օժանդակություն հասցրեց տաճիկների դեմ պայքարող հայ բանակին, փաշաներին ու խաներին հանգիստ չէր տալիս»[4]: Այս գնահատականը եզակի չէ. նույն տեսակետն են հայտնում Ե. Իշխանյանը[5] և ուրիշներ:

Թուրքական զինվորական իշխանությունները Բաքվի արշավանքին զուգահեռ փորձում են տիրել Ղարաբաղին: 1918 թ. սեպտեմբերի սկզբներին Ադդամում տեղակայված թուրքական զորախմբի հրամանատար Ջամիլ-Ջահիդ բեյը երկու անգամ վերջնագիր է ուղարկում Ղարաբաղի ժողովրդական կառավարությանը՝ Ադրբեջանին ենթարկվելու և զինաթափվելու պահանջով: Սեպտեմբերի 21-ին Ադդամ է գալիս ոչ անհայտ Նուրի փաշան: Հայկական կողմը, խուսափելով արյունահեղությունից, սեպտեմբերի 23 -ին առերես համաձայնություն է տալիս ժամանակավորապես ենթարկվել Ադրբեջանին, զինաթափվել և սահմանափակ թվով թուրք ասկյարներ բաց թողնել Շուշի: Սեպտեմբերի 26-ին (այլ աղբյուրներում՝ 24-ին, 25-ին[6]) Ջամիլ բեյը Գալիպոլյան դիվիզիայի 6000 ասկյարներով (այլ աղբյուրներում՝ 5000, 2000[7]) երեք զրահապատ մեքենաներով մտնում է Շուշի և տեղավորվում հայկական թաղամասում: Թուրքական բանակը Շուշիում մնում է մինչև 1918 թ. նոյեմբերի 16-ը[8]: Ադրբեջանը, այսպիսով, թուրքական զենքի ուժով իրեն է ենթարկում Շուշին, բայց ոչ Ղարաբաղը. գավառները շարունակում են իրենց անկախ, ողբերգական փորձություններով լի կյանքը:

Իթթիհատական Թուրքիան իր հաղթական արշավանքի ընթացքում՝ 1917–1918 թթ., ճարպիկ քաղաքականությամբ հաջողում է Անդրկովկասն անջատել Խորհրդային Ռուսաստանից, ստեղծել Անդրկովկասի Ֆեդերատիվ Հանրապետություն անվանյալ պետական կազմավորում, որը կարճատև կյանք ունեցավ: Արևելյան Անդրկովկասի թաթարների հետ դաշնակցած ու Վրաստանի լուռ աջակցությամբ Անդրկովկասի երեք ժողովուրդներին բաժան-բաժան անելով ու ճանաչելով դրանց անկախությունը՝ Թուրքիան յուրաքանչյուրի հետ կնքում է

---

[3] Б. Б а й к о в. Воспоминание о революции в Закавказье (1917 – 1920 гг.).– Русский архив, кн. 9 – 10, М., 1991, с. 143.

[4] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Անկախ և Միացյալ Հայաստան. Բոստոն, 1920, էջ 35 - 36:*

[5] *Ե. Ի շ խ ա ն յ ա ն. Ղարաբաղը 1917–1920. Երևան, 1999, էջ 220:*

[6] *Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում. Երևան, 1971, էջ 92:*

[7] *Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ. Երևան, 1996, էջ 60, Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Արցախյան գոյապայքար. Երևան, 1994, էջ 33:*

[8] *Արցախը կանչում էր Անդրանիկին, փաստաթղթեր: Կազմող՝ պ. գ. թ. Հ. Բ. Աբրահամյան, Երևան, 1995, էջ 42:*

առանձին պայմանագիր: 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում «Հաշտության ու բարեկամության պայմանագիր» է կնքում մայիսի 28-ին անկախություն հռչակած Հայաստանի Հանրապետության հետ[9], ըստ որի Հայաստանին տրվում էր 12.000 քառ. կմ տարածք՝ մոտ մեկ միլիոն բնակչությամբ[10]: Իսկ պատմության ասպարեզում հայտնված Արևելյան Անդրկովկասի թուրք-թաթարների պետական կազմավորումը կոչվեց «Ադրբեջան»: Նշենք, որ նման կազմավորման ստեղծման մեջ խիստ շահագրգռված էր Թուրքիան, նաև Անգլիան ու Գերմանիան: Բայց ադրբեջանական պետության ստեղծողն ու պահողը Թուրքիան էր, այդ էր ճշմարտությունը:

Ապշերոնյան թերակղզին գրավիչ էր ոչ միայն նավթի հսկայական պաշարների շնորհիվ, այլև իբրև Թուրքիայի համաթուրանական երազանքի իրականացմանը նպաստող կարևոր գործոն: Իսկ թուրքական կառավարող շրջանները և նորահայտ Ադրբեջանի Հանրապետությունը ձեռք ձեռքի տված հայերին ոչնչացնելու իրենց քաղաքականությունն ամենևին չէին քողարկում: Իրավացի է Ղարաբաղի հիմնահարցի գիտակ Ա. Մանասյանը, երբ գրում է. «Ադրբեջանի Հանրապետությունը թուրքական նոր պետություն ստեղծելու առաջին նախակիպրոսյան փորձն է՝ ինտերվենցիայի ոչ թուրք ժողովուրդների արտաքսման, բնաջնջման ճանապարհով»[11]:

Նորահայտ պետական կազմավորման Ադրբեջան անվանումը պատահական չէր ընտրված: «Ադրբեջան - Ազերբայջանը» Իրան - Պարսկաստանի հյուսիսային ընդարձակ, թուրքերով բնակեցված, աշխարհագրական «Ատրոպատենա - Ատրպատական» նահանգի արաբական անվանումն է, որի հյուսիսային սահմանը Արաքս գետն է: Անցյալի և ժամանակակից մի շարք պատմաբաններ, քաղաքական գործիչներ իրենց անհամաձայնությունն ու տարակուսանքն են հայտնել այլ երկրի՝ Պարսկաստանի տեղանվանումը «սեփականաշնորհելու» իրողության վերաբերյալ և փաստարկել նման մոտեցման անհիմն լինելը: Դա էր պատճառը, որ Պարսկաստանը երկար ժամանակ չի ցանկացել ճանաչել Ադրբեջանի Հանրապետությունը և հարաբերություններ չի ունեցել նրա հետ[12]: Բ. Բայկովն իր «Հուշերում» գրում է, թե այն տարածքը, որին Ադրբեջան անունն են շնորհել նախքան Ռուսական կայսրությանը միացնելը, բաղկացած է եղել առնվազն յոթ խանություններից, որոնք ենթարկվել են Պարսկաստանին և երբևէ միասնական քաղաքական ամբողջություն չեն կազմել, անընդհատ պատերազմների մեջ են եղել միմյանց հետ և ոչ մեկը չի կրել հիշյալ անունը: Տարածքը Ռուսական կայսրությանը միացվելուց հետո ներկայացնում էր Բաքվի և Ելիզավետպոլի վարչատարածքային միավորները՝ նահանգները: Այսպիսով, Ղարաբաղը դժբախտություն է ունեցել մտնել Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ և հայտնվել նորա-

---

[9] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետությունը. Երևան, 1993, էջ 108–109, 160–161:*

[10] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց.1, գ. 24 (տպագիր օրինակ):*

[11] А. С. М а н а с я н. Карабахский конфликт.– “Международно-признанные основания проблемы”, Ереван, 1997, с. 53–54.

[12] Б. Б а й к о в. *Նշվ. աշխ., էջ 142:*

հայտ Ադրբեջանի Հանրապետության սահմաններում ու դառնալ նրա նկրտումների առարկան:

Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց 1918 թ. աշնանը Եռյակ Միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա և Թուրքիա) լիակատար պարտությամբ: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մալթա կղզու Մուդրոս վայրում Թուրքիան ստորագրեց իր լիակատար պարտությունը հաստատող վավերագիրը, իսկ Անտանտի կողմից այն ստորագրեց Անգլիայի ներկայացուցիչը[13]: Մինչ այդ՝ հոկտեմբերի 9-ին, Թալեաթի կառավարությունը հրաժարական էր տվել, իշխանության գլուխ էր անցել Ահմեդ Իզզեթը, որը նույն հայատյացն էր, ինչ իր նախորդները: Իզզեթը դիմում է ԱՄՆ նախագահ Վիլսոնին՝ հետպատերազմյան աշխարհում հասարակական բնականոն հարաբերությունների սկզբունքներ մշակելու, հաշտության բանակցություններ սկսելու խնդրանքով՝ հիմք ընդունելով Վիլսոնի առաջարկած «14 կետերը»[14]:

Նոյեմբերի 13-ին խորհրդային Ռուսաստանը չեղյալ է հայտարարում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը՝ նախապես խզելով դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ[15]: Նոյեմբերի 9-ին Կայսերական Գերմանիան ճանաչում է իր պարտությունը: Բրեստի պայմանագրի իրավական ուժը կորցրած լինելու իրողությունից են բխում 1918 թ. հունիսին անդրկովկասյան հանրապետությունների հետ Թուրքիայի կնքած սեպարատ պայմանագրերը:

Մուդրոսի զինադադարի համաձայնագրի հիման վրա Թուրքիան պարտավորվում է բոլոր ռազմագերիներին ու արտաքսվածներին հավաքել Կ. Պոլսում և հանձնել դաշնակիցներին, իր զորքերը դուրս բերել Անդրկովկասից: 15-րդ կետով դաշնակիցներին իրավունք է վերապահվում օկուպացնել Բաթումն ու Բաքուն և ամենակարևորը՝ դադարեցնել ռազմական գործողությունները[16]:

1918 թ. հոկտեմբերի 31-ին Անգլիայի կառավարությունը հրահանգում է Իրաքում տեղակայված իր զորքերին գրավել Բաքուն և նրա շրջակայքի նավթային շրջանները[17]: 1918 թ. նոյեմբերի 15-ին[18] (այլ աղբյուրներում՝ 17-ին) Էնզելիից, որն այն օրերին դեռևս գտնվում էր Ռուսաստանի տնօրինության ներքո, նավախմբի ուղեկցությամբ Բաքու է ժամանում բրիտանական գեներալ Վ. Մ. Թոմսոնն իր շտաբով: Նրա հետ էին նաև դաշնակից երկրների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Հյուսիսային Ամերիկայի (ԱՄՆ) ներկայացուցիչները:

Դաշնակից երկրների ներկայացուցիչների մուտքը Բաքու ուրախությամբ և գոհունակությամբ է ընդունում Բաքվի քրիստոնյա բնակչությունը, մասնավորապես՝ հայերն ու ռուսները: Ինչ վերաբերում է Հայաստանին, հայ ժողովրդին, ապա իբրև Անտանտի կրտսեր դաշնակից, Եղեռն ու նյութական վիթխարի կո-

---

[13] Армянский вопрос.– Энциклопедия, Ереван, 1991, с. 233.

[14] *Գ. Գ ա լ ո յ ա ն. Հայաստանը և Մեծ տերությունները 1917–1923 թթ. Երևան, 1999, էջ 48:*

[15] *Նույն տեղում, էջ 49:*

[16] Армянский вопрос. с. 233.

[17] *Գ. Գ ա լ ո յ ա ն. նշվ.աշխ., էջ 51:*

[18] Б. Б а й к о в. *Նշվ.աշխ., էջ 146:*

ռուստներ կրած ժողովուրդ՝ մեծ հույսեր էր փայփայում ինչպես քաղաքական, այնպես էլ ֆիզիկական ու նյութական հատուցում ստանալու ակնկալիքով:

Գեներալ Թոմսոնն ափ իջնելով, ի պատասխան Ռուսական ազգային խորհրդի ողջույնի, ընդգծում է, որ ինքը գտնվում է ռուսական հողի վրա. «Մեծ պատերազմն ավարտվել է Անտանտի լիակատար հաղթանակով: Ես այստեղ՝ Բաքու եմ եկել իբրև նրա ներկայացուցիչ, մինչև 1914 թ. Ռուսաստանի սահմանները, Կովկաս, Ռուսաստանին պատկանող ռուսական հողը՝ Կասպից ծովից մինչև Սև ծով: Ես դեռ կհանդիպեմ ռուս ժողովրդի ներկայացուցիչների հետ»[19]:

Հատկանշական է, որ անգլիացի գեներալը շատ չոր է պատասխանում Ադրբեջանի Հանրապետության ներկայացուցչի ողջույնին և կարգադրում է իջեցնել Ադրբեջանի Պետական դրոշը[20]: Թոմսոնին ողջունում է նաև Բաքվի հայոց հոգևոր առաջնորդ, Բաքվի Հայոց ազգային խորհրդի պատվավոր նախագահ Բագրատ եպիսկոպոսը: Պահպանվել է վերջինիս ողջույնի խոսքը, որը գրավոր հանձնվել է անգլիացի գեներալին[21]: Բաքվի հայոց հոգևոր առաջնորդը դիմումով ներկայացնում է իր հոտի կրած զարհուրելի տառապանքները և խնդրում միջոցներ գործադրել ողջ մնացածների վիճակը թեթևացնելու համար:

Ռուսական ազգային խորհրդի անդամների հետ հանդիպման ժամանակ Գեներալ Թոմսոնը հայտնում է, որ ինքը Բաքվի գեներալ-նահանգապետն է, իր իրավասության սահմանները կընդարձակվեն ըստ հարկի և որ ինքը թույլ չի տա ազգային հակամարտության որևէ դրսևորում: Ապա ավելացնում է, քանի որ Ադրբեջան կոչված երկրում ապրում են «պետականորեն տրամադրված» երեք ժողովուրդներ՝ թաթարներ, հայեր և ռուսներ, ուստի և նրանք միասնաբար, համախորհուրդ պետք է տնօրինեն այդ հանրապետության ներքին կյանքը, մինչև Փարիզի վեհաժողովը կլուծի պատերազմի հետևանքով ծագած հարցերը[22]: Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ Թոմսոնը ոչ թե չէր «միջամտում» Անդրկովկասի գործերին, այլ, ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Գալոյանը, «Անգլիական զորքերի հրամանատարությունը գրգռիչ միջամտություն էր կատարում երկրամասի հանրապետությունների միջև ծագած կոնֆլիկտներին, դրանք ծառայեցնելով ի շահ տարածաշրջանում Բրիտանական կայսրության քաղաքական նպատակներին»[23]:

Շուտով Անտանտը ներկայացնող անգլիական զորքերը Բաթումով մտնում են Անդրկովկաս և օկուպացնում ողջ երկրամասը:

Նախքան Ադրբեջանի Հանրապետության պատմության բեմում հայտնվելը, Ռուսական կայսրության վերացումից մինչև 1918 թ. մայիսը, Արցախ-Ղարաբաղը ապրել է ինքնուրույն, անկախ կյանքով, կառավարվել ժողովրդի կամքով ստեղծված ազգային կառավարության կողմից: Նորաթուխ Ադրբեջանի Հանրապետությանը ենթարկվելու բոլոր առաջարկությունները, սպառնալիքները արդ-

---

[19] Б. Б а й к о в. *Նշվ.աշխ., էջ 147:*

[20] *Նույն տեղում:*

[21] *Հայերի կոտորածները…, էջ 145, վավ. № 136:*

[22] Б. Б а й к о в. *Նշվ.աշխ., էջ 148:*

[23] *Գ. Գ ա լ ո յ ա ն. նշվ.աշխ., էջ 54:*

յունք չեն տվել: Բաքվում տեղակայված բրիտանական զինվորական հրամանատարության քաղաքական նկրտումները Ղարաբաղի խնդրում համընկան Ադրբեջանի ազգայնական իշխանությունների շահերի հետ:

Ի դեպ, անգլիացիներն առաջին անգամ Բաքու էին մտել դեռևս 1918 թ. օգոստոսին՝ քաղաքը պաշտպանող Յենտրկասպիի բանակին օգնելու նպատակով: Մերձավոր Արևելքում գտնվող անգլիական զինված ուժերը, բացի Բաքուն գրավելուց, այլ խնդիրներ էլ ունեին, և հրամանատարությունը չի կարողացել բավարար չափով սատարել Բաքվի պաշտպաններին[24], իսկ այս անգամ գեներալ Թոմսոնն ադրբեջանական հանրապետության հետ միասնաբար ձեռնամուխ է լինում ըմբոստ Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկելու խնդրի իրագործմանը:

Ամենայն հավանականությամբ, գեներալ Թոմսոնը տեղյակ էր Անդրկովկասում տիրող քաղաքական, տնտեսական իրադրությանը, տեղյակ էր նաև Ղարաբաղ-Ադրբեջան հարաբերություններին: Ղարաբաղում նրա հայտնվելը պայմանավորված էր զորավար Անդրանիկի՝ Ղարաբաղի ուղղությամբ սկսած ռազմական գործողություններով: Անդրանիկի ներկայությունը Գորիսում լուրջ վտանգ էր ներկայացնում Ադրբեջանի և շրջակայքի թուրք-թաթար հրոսակախմբերի համար: Դեպի Շուշի նրա ձեռնարկած արշավանքի լուրը հասել էր Բաքու և դրդել մուսավաթական կառավարությանը դիմել բրիտանական գեներալին՝ կանխելու զորավարի առաջխաղացումը: Անդրանիկը նոյեմբերի սկզբին վերջապես տեղի տալով Ղարաբաղի զինվորական հրամանատարության, հայ բնակչության խնդրանքին, վճռել էր գրավել Շուշին, այնուհետև օգնել դարաբաղցիներին՝ ազատվելու թուրքերի ներկայությունից: Զաբուղի ձորում մի շարք մարտեր մղելով և կոտրելով թշնամու համառ դիմադրությունը՝ նոյեմբերի կեսերին զորավարն իր հարվածային ջոկատով ու վերջինիս միացած տեղի կամավորներով գտնվում էր Շուշուց 20–25 կմ հեռավորության վրա[25]: Նոյեմբերի 18-ին Ավդալար գյուղում նա հեռագիր է ստանում գեներալ Թոմսոնից[26]: Հեռագիրը տեղ է գտել Անդրանիկին նվիրված վավերագրերի ու նյութերի ժողովածուում, սակայն, ցավոք, թերություններով ու սխալներով, որոնք առաջացել են հին ու նոր տոմարների շփոթմունքից[27], նաև անփութությունից: Թոմսոնի հեռագրի վերջին մասը, որի ներքո Խան-Խոյսկու ազգանունն է, և որը վկայում է հեռագիրը կազմելու նրա անմիջական մասնակցության մասին, չի տպագրվել, իսկ այն տրված է ոչ թե նոյեմբերի 23-ին, այլ 26-ին[28] (նոր տոմ.):

Եվ, այսպես, Թոմսոնը նոյեմբերի 26 թվակիր հեռագրում հայտնում է, որ շուտով հայ զորավարին հանդիպելու համար Շուշի է ուղարկելու բրիտանական մի սպայի և Անդրանիկից պահանջում է անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները թուրքերի դեմ: Այն միաժամանակ սպառնալիք է պարունակում

---

[24] Нагорный Карабах в 1918 - 1923 гг. Сборник документов и материалов, сост. В. А. Микаелян и др. Ереван, 1992, с. 51, док. № 33.

[25] *Արցախը կանչում էր Անդրանիկին, էջ 42:*

[26] *ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 52, թթ., 2, 3,* Андраник Озанян, Ереван, 1991, с. 317, док. № 157.

[27] *Ե. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 313:*

[28] *ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 52, թ. 3,* Андраник Озанян, с. 317, док. № 157.

զորավարի հասցեին. եթե նա չենթարկվի կարգադրություններին, անձամբ պատասխանատվություն է կրելու հետևանքների համար[29]: Այս կերպ սկսվեց դաշնակիցների՝ անգլիացիների գործունեությունը Ղարաբաղում: Զորավարը պատասխանում է Թոմսոնին և ըստ ամենայնի պատճառաբանում իր ռազմական գործողությունների նպատակը. կասեցնել այն բռնարարքները, սպանությունները, որոնց ենթարկվում են հայերը Զաբուղի ձորը գրաված թուրք-թաթարների կողմից, հատկապես Կալադարասի (Ղարաղշլաղ) գյուղի ոչնչացումը և, ընդհանրապես, բարբարոսական վերաբերմունքը հայ բնակչության հանդեպ[30]:

Թոմսոնի առաքելության ներկայացուցիչները՝ անգլիացի կապիտան Գոլդսմիտը և ֆրանսիացի կապիտան Պասֆելդը (Կասֆելդը)[31] 1918 թ. դեկտեմբերի 2-ին Գորիսում այցելում են Անդրանիկին և հանձնում նրան վերոհիշյալ հեռագրից հայտնի բովանդակությամբ նամակ[32]: Ղարաբաղցիները փորձում են կանխել բանագնացների հանդիպումը զորավարի հետ, սակայն նրանց ջանքերը հաջողությամբ չեն պսակվում[33]: Թեև դարաբաղցիները հավատացած էին, որ Անդրանիկը ենթարկվելու է անգլիացիների պահանջին և վերադառնալու է Գորիս: Այդպես էլ լինում է: Իսկ դաշնակիցներն Անդրանիկին՝ հայերին օգնելու շռայլ խոստումներ են տալիս և իրենց հետ Բաքու տարած Արշակ Շիրինյանի միջոցով 2 միլիոն [ռուբլի] ուղարկում Գորիսում ապաստանած արևմտահայ գաղթականների կարիքները հոգալու նպատակով, որից 200000-ը տրվում է դարաբաղցիներին[34]: Այսպիսով, անգլիացիներին հաջողվում է արգելել Անդրանիկի մուտքը Ղարաբաղ:

Նոյեմբերի 29-ին (դեկտեմբերի 12-ին) Շուշի է ժամանում անգլիական բանակի մայոր Գիբբոնը՝ գաղթականների խնդիրներին մոտիկից ծանոթանալու համար[35]: Իր պաշտոնական հայտարարության մեջ մայորը ազդարարում է, որ քաղաքական և տարածքային խնդիրները ներկայացուցչությանը չեն վերաբերում և պիտի լուծվեն Փարիզի խաղաղարար կոնֆերանսում[36]: Ղարաբաղի թեմի առաջնորդի հետ հանդիպման ընթացքում Գիբբոնը պարզում է իր նպատակը, այն է՝ եկել է գաղթականների հարցով զբաղվելու, և որ ինքը ծանոթ է հայ ժողովրդին, եղել է միսիոներ Թուրքիայում: Զրույցն ընթացել է հայերեն լեզվով. անգլիացին տիրապետել է հայերեն[37]: Սակայն շուտով պարզվում է նաև, որ նախկին միսիոներ Գիբբոնը, Շուշի է եկել ոչ միայն և ոչ այնքան մարդասիրական առաքելությամբ: Քաղաքի պատերին փակցվում է հայտարարություն, ըստ որի նա ներկայացնում է քաղաքի իշխանությունը՝ օգնականներ ունենալով հայ քաղաքագլխին և տաճիկներից նշանակված թուրք գավառապետին:

---

[29] Андраник Озанян, с. 317, док. № 157.

[30] *Նույն տեղում, էջ 316, փաստ. № 156:*

[31] *Անուններն այլ աղբյուրներում որոշ չափով տարբերվում են:*

[32] *ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 50, թթ. 9–10, Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 298:*

[33] *Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 285–290:*

[34] *Նույն տեղում, էջ 301:*

[35] *Նույն տեղում, էջ 302:*

[36] *«Մշակ», 2.III.1919:*

[37] *Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 302:*

Մինչ Գիբբոնը ծանոթանում էր գաղթականության դրությանը, Ղարաբաղի զինվորական հրամանատարները, ազգային հասարակական գործիչները խորհրդակցություններ էին գումարում, թե ինչպես ձևավորեն, ստեղծեն այնպիսի քաղաքացիական մի մարմին, որն ի զորու լինի հարաբերություն հաստատել ու պահպանել «օտար ուժերի» հետ: Որոշում է կայացվում ստեղծել ժամանակավոր Ազգային խորհուրդ, որը նախքան Ղարաբաղի վերաբերյալ հարցերն անգլիական միսիային ներկայացնելը, քննարկեր և մի ընդհանուր, միակամ եզրակացության գար: Հարկ է նշել, որ այդ Խորհրդի որոշումները իրավական բնույթ չէին կրելու և առավելապես բարոյական նշանակություն պետք է ունենային[38]:

Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ գոյություն ունեին տարբեր մոտեցումներ: Գործիչներից ոմանք գտնում էին, որ կարելի է ստեղծել «անկախ Ղարաբաղի նահանգ և առանձին կառավարություն»[39]: Այդ տեսակետն էին արտահայտում Վարանդայի, Դիզակի հրամանատարներն ու Շուշվա պարետը՝ Անդրանիկին ուղղված դեկտեմբերի 16-ի նամակում: Ղարաբաղի հրամանատարների մի մասի կարծիքով երկրամասի ազգային իշխանությունները ապագայում պետք է գործեն անգլիական հրամանատարության հովանու ներքո: Այդ մասին նրանք գրում էին Անդրանիկ զորավարին՝ վերջինիս Գորիս վերադառնալուց հետո[40]: Նույնիսկ լավատեսորեն կարծում էին, որ Ղարաբաղը «բարեկամ անգլիացիներին իր մոտ տեսնելով չի կարող Ադրբեջանի որևէ կառավարություն ճանաչել: Մենք կառաջարկենք միայն, որ Ղարաբաղում բարձր իշխանությունը անգլիացիներից լինի: Բացի դրանից, ներկայացուցիչներ պիտի ուղարկենք Բաքու՝ Ղարաբաղի ապագայի վիճակը տնօրինելու համար հուշագիր ներկայացնելու դաշնակիցներին»[41]:

Նախքան անգլիական հրամանատարության դիրքորոշման բացահայտ դրսևորումը Ղարաբաղի հարցի վերաբերյալ, դեկտեմբեր ամսվա ընթացքում տեղի են ունենում որոշ իրադարձություններ: Դեկտեմբերի 8-ին Թոմսոնի ներկայացուցիչ կապիտան Սերրայդը մի սպայի հետ չորս մարդատար մեքենաներով՝ յուրաքանչյուրում չորս զինվոր, հասնում է Շուշի[42]: Այլ աղբյուրների վկայությամբ առաջին անգամ Շուշի է մտել 50 անգլիական զինվոր[43]: Կապիտանը հայտնում է, որ ինքը եկել է Ղարաբաղի չքավորներին օգնելու, երկու ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելու համար և որ նույն նպատակով շուտով անգլիական զորք է գալու[44]: Սերրայդի առաջին գործերից մեկը լինում է այն, որ նա պահանջում է Շուշի նոր հասած գունդը զինաթափ անել և զենքերը հանձնել իրեն: Ժամանակավոր խորհուրդը, ներկայացնելով գնդի ստեղծման պատմությունը, մերժում է պահանջը:

---

[38] *Նույն տեղում, էջ 301, Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 131:*

[39] *Արցախը կանչում էր Անդրանիկին, էջ 43:*

[40] *Նույն տեղում, էջ 41:*

[41] *Նույն տեղում:*

[42] *Ե. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 304:*

[43] *Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 44, Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 98:*

[44] *Ե. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 305:*

Թեև Մուդրոսի զինադադարի համաձայնագրի պայմաններով թուրքական զորքը պետք է դուրս գար Անդրկովկասից, սակայն իրականությունն այլ էր: Ռազմական գործողությունները դադարեցնելու հրահանգով Ղարաբաղի հրամանատարությանն էր դիմել Անդրանիկը[45]: Հայկական կողմը ենթարկվել էր հրահանգին: Այդ պարագայում, սակայն, Ղարաբաղի գյուղերը պարբերաբար հարձակման էին ենթարկվում թուրք ասկյարներից ու տեղի թուրքերից բաղկացած հրոսակախմբերի կողմից, որոնք կազմակերպվում, զինվում էին թուրք բարձրաստիճան զինվորականների անմիջական հրամանատարությամբ ու միջոցներով: Վավերագրերը հաստատում են, որ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ադրբեջանում էին գտնվում ոչ անհայտ Նուրի փաշան, Քյազիմ բեյը և այլոք[46]: Այդ ընթացքում թալանվեցին ու ավերվեցին Ղարաբաղի մի շարք գյուղեր՝ Սոս, Մաճկալաշեն, Խծաբերդ, Դուդուկչի, Հին Թաղեր, Ճարտար և այլն[47]: Ավազակային հարձակումները կատարվում էին օրը ցերեկով, անգլիական միսիայի աչքի առաջ, և վերջինս բացարձակապես ոչ մի միջոց չէր ձեռնարկում: Նրա ներկայացուցիչը, ոչ առանց Թոմսոնի գիտության, հայտարարում էր, թե ինքը իրավունք չունի խառնվելու Ադրբեջանի ներքին գործերին. իր խնդիրը գաղթականների կարիքները հոգալն է, նրանց օգնություն կազմակերպելը[48]: Դեկտեմբերի 3-ին Բաքվի Հայոց ազգային խորհրդին հասցեագրած նամակում Դիզակի ներկայացուցիչ Ա. Շահնազարյանը թուրքերի հարձակումների կապակցությամբ գրում է. « ...այդ առթիվ այստեղի միսիային երկու զեկուցագիր է ներկայացրած, բայց դրությունը մնում է նույնը և խեղճ գյուղացիները գիշեր-ցերեկ դիրքեր են պահում: Անգլիական միսիան այդպիսով մեր ներկայացրած զեկուցագրերը ուղարկում է Ադրբեջանի գավառապետին, որից ոչ մի պատասխան չի ստացվում, չի էլ կարող ստացվել»[49]:

Ղարաբաղի ներկայացուցիչները տակավին հույսեր էին փայփայում անգլիական հրամանատարության ազատարար առաքելության վերաբերյալ: Կարծում էին, թե անգլիական հրամանատարությունը բավարար չափով տեղեկացված չէ իրադրությանը, դիմում էին Անդրանիկի, Բաքվի Հայոց ազգային խորհրդի, գեներալ Բագրատունու միջնորդությանը, իրենք էին ցանկանում գնալ Բաքու, ներկայացնել իրենց արդար պահանջները. «Մեր բարեկամ Անգլիան չպետք է մեզ ստիպե նրան [Ադրբեջանին] ենթարկվելու. դա մեզ համար, եթե մինչև իսկ տևելու լինի 3–4 ամիս, ոչ թե միայն պատվի հարց է, այլ նաև ֆիզիկական գոյության, որի համար այնքան արյուն ենք թափել»[50]:

Դեկտեմբերին տեղի ունեցած դեպքերն Ազգային խորհրդի անդամների մեջ կասկածներ են առաջացնում, հավատը անգլիացիների առաքելության հանդեպ խարխլվում է: Շատ շուտով, դեկտեմբերի 23 -ին կապիտան Սերրայդը Ազգային

---

[45] А н д р а н и к О з а н я н, с. 318, 319, док. № 158, 159.

[46] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 10, թ. 310, Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 93–94:*

[47] *Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 44, Արցախը կանչում էր Անդրանիկին, էջ 45, Հայերի կոտորածները…, էջ 176:*

[48] *Հայերի կոտորածները…, էջ 176, վավ. № 158:*

[49] *Նույն տեղում:*

[50] *Նույն տեղում:*

խորհրդին հայտնում է Թոմսոնի հրամանը՝ մինչև Փարիզի խաղաղարար կոնֆերանսում հարցի լուծումը Ղարաբաղը ժամանակավորապես Ադրբեջանին ենթարկելու մասին[51]*:*

Ամփոփելով 1918 թ. երկրորդ կեսին Անդրկովկասում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքները, փաստենք, որ չնայած նորահայտ Ադրբեջանի գործադրած միջոցներին, նրան չի հաջողվում հայկական Ղարաբաղը ենթարկել իր գերիշխանությանը:

ВОЕННО - ПОЛИТИЧЕСКАЯ ОБСТАНОВКА В БАКУ И В КАРАБАХЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1918 Г.

ЛОРЕТА АБРАМЯН

Р е з ю м е

Новоявленная Азербайджанская республика с первого дня своего существования стремилась распространить свою власть над армянским Карабахом, который никогда за всю свою историю не подчинялся государству, не существовавшему до 1918 г. Для достижения своих целей, в частности, утверждения правительства в Баку и завоевания Карабаха, Азербайджан обратился за помощью к вторгнувшейся в Закавказье Турции, а затем – к представителю Антанты – английскому оккупационному командованию в Баку. Армяне Карабаха связывали большие надежды с представителями победившей в I мировой войне Антанты, однако эти ожидания постепенно рассеивались.

MILITARY AND POLITICAL SITUATION IN BAKU AND KARABAKH IN THE SECOND HALF OF 1918

LORETA ABRAHAMYAN

S u m m a r y

The newly-formed Azerbaijani Republic from the first days of its existence had been trying to extend its power over Armenian Karabakh, which never, during its history, had obeyed a state that did not exist before 1918. For the attainment of its goals, specifically formation of a government and invasion of Karabakh, Azerbaijan appealed for help from Caucasus intruder Turkey, and later on from the representative of the Entente – English conquering headquarters in Baku. Karabakh Armenians were connecting a lot of hopes with Entente, which won the world war I, but these hopes gradually disappeared.

---

[51] *Ե. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 313:*